

«Ծեղը՝ հանրակրթության բաղկացուցիչ»
Ուսումնական փաթեթ

Տաղավար տոներ

- [Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն](#)
- [Սուրբ Հարության տոն. Զատիկ](#)
- [Պայծառակերպության տոն. Վարդավառ](#)
- [Վերափոխումն Աբ. Աստվածածնի. Խաղողօրհներ](#)
- [Խաչվերաց](#)

1.

Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն

Հոգևորականները հորդորում են Ամանորը դիմավորել եկեղեցում, խորհել հոգևոր վիճակի մասին և ստանալ Աստծո օրհնությունը: Քրիստոնեական առումով Ամանորը հաշվետվության յուրօրինակ օր է յուրաքանչյուր մարդու համար: Օր՝ ամփոփվում են տարվա ընթացքում կատարված գործերը: Ամանորն ինքնին օրացուցային փոփոխման երևույթ է, և իր մեջ որևէ խորհուրդ չունի:

Իր թե նշանակությամբ, թե էությամբ, և թե խորհրդով Ամանորը զիջում է Ս. Ծննդյանը: Իսկ Ս. Ծնունդն ամբողջությամբ Խորին Խորհուրդ է՝ Աստծո Որդու Ծնունդը: Իզուր չէ, որ շուրջ 2000 տարի մարդկությունն իր տոմարական բոլոր հաշվարկները կապում է Քրիստոսի Ծնունդով՝ նախքան Քրիստոս և Քրիստոսի Ծնունդից հետո:

Ս. Ծնունդը աշխարհի քրիստոնյաների ամենամեծ և սիրված տոներից է: Կաթոլիկ եկեղեցին այդ տոնը նշում է դեկտեմբերի 25-ին: Մինչև 4-րդ դարը, բոլոր քրիստոնյաները Ս. Ծնունդը նշել են հունվարի 6-ին: Սակայն քրիստոնեության ընդունումից հետո էլ հռոմեացիները շարունակում էին հեթանոսական տոներ նշել: Բանն այն է, որ դեկտեմբերի 25-ին մեծ շուքով նշվում էր արևի պաշտամունքին նվիրված տոնը: Հեթանոսական ավանդույթները խափանելու համար 336թ. Հռոմի եկեղեցին դեկտեմբերի 25-ը պաշտոնապես հռչակեց Հիսուս Քրիստոսի ծննդյան օր: Հետագայում Ասորիքում և գրեթե ողջ արևելքում Քրիստոսի Ծննդյան տոնի օրը փոխադրվեց դեկտեմբերի 25, իսկ հունվարի 6-ը մնաց որպես Տիրոջ Աստվածահայտնության, Մկրտության օր: Հնագույն

ավանդության և ավետարանական հաշվարկներին հավատարիմ է մնացել միայն Հայ առաքելական Ս. Եկեղեցին՝ հունվարի 6-ին միասնաբար նշելով Քրիստոսի Ծննդյան և Աստվածհայտնության տոները:

Հունվարի 6-ին Հայ առաքելական Եկեղեցին նշում է Հիսուս Քրիստոսի Ծննդյան տոնը: Ըստ Հայ Եկեղեցու, Ս. Ծննդյանը նախորդող մեկ շաբաթը պահոց շրջան է: Դեկտեմբերի 30-ից մինչև հունվարի 5-ի երեկո մարդիկ պահք են պահում: Այդ ընթացքում օգտագործվում է բացառապես բուսական ծագում ունեցող սնունդ: Պահեցողները պահող շրջանից դուրս են գալիս հունվարի 5-ի երեկոյան, երբ եկեղեցում մատուցվում է Ս. Ծննդյան ճրագալույցի Ս. Պատարագ և տրվում է Ս. Ծննդյան ավետիսը: Մարդիկ միմյանց ողջունում են՝ «Քրիստոս Ծնվեց և Հայտնվեց», «Օրհնյալ է Հայտնությունը Քրիստոսի»:

Սուրբ Ծնունդն սկսում ենք տոնել հունվարի 5-ի երեկոյան և հունվարի 6-ին: Հունվարի 5-ի երեկոյան բոլոր եկեղեցիներում մատուցվում է ճրագալույցի Ս. Պատարագ: Հետաքրքիր է, որ ճրագալույցի Ս. Պատարագ տարին ընդամենը երկու անգամ է մատուցվում՝ Ս. Ծննդյան և Ս. Հարության տոներին: Ճրագալույց նշանակում է ճրագ (մոմ) լուցանել, այսինքն՝ վառել: Այդ օրը երեկոյան մարդիկ եկեղեցում վառված ճրագներն իրենց հետ տուն են տանում: Այն խորհրդանշում է աստվածային լույս, եկեղեցու օրհնություն: Ճրագալույցը խորհրդանշում է բեթղեհեմյան աստղի լույսը, որն առաջնորդեց մոզերին դեպի Հիսուս Մանուկ:

Քրիստոսի մայրը՝ սուրբ Կույս Մարիամ Աստվածածինը, ծնվել է ամուլ ծնողներից: Նա աստվածատուր է, որովայնից ընտրյալ զավակ, և նրա ծնունդը հրեշտակն է ավետել: Մարիամը սերում է քահանաների ու թագավորների տոհմից: Մարիամի հայրը՝ Հովակիմը, Հուդայի թագավորական ցեղից էր, իսկ մայրը՝ Աննան, Ղևիի քահանայական ցեղից, ով Գալիլիայում ամուսնացավ Հովակիմի հետ և ծնեց հրաշագեղ Մարիամին: (Ի դեպ, Մարիամ Աստվածածնի ազգաբանությանը, կենսագրության առանձին դրվագներին անդրադարձել է նաև Մովսես Խորենացին):

Ըստ Ղուկասի Ավետարանի վկայության, Հիսուս ծնվել է առաջին մարդահամարի ժամանակ, երբ Նրա մայրը՝ Մարիամը, իր ամուսնու՝ Հովսեփի հետ Նազարեթ քաղաքից Բեթղեհեմ էր գնում՝ իրենց հայրենի քաղաքում արձանագրվելու համար: Հիսուսի մայրը՝ Մարիամը, շնորհալի կույս էր, որը նշանված էր Հովսեփ անունով մի բարեպաշտ մարդու հետ: Սակայն ամուսնությունից առաջ Մարիամը հղիացել էր Սուրբ Հոգուց: Այդ մասին նրան ավետել էր Աստծու հրեշտակը. «Մի վախեցիր, Մարիամ, որովհետև դու արժանացար Աստծու շնորհին: Ահա դու կհղիանաս եւ կծնես մի որդի ու նրա անունը

Հիսուս կղնես: Նա մեծ կլինի եւ Բարձրյալի Որդի կկոչվի [...] Նրա թագավորությունը վախճան չի ունենա» (Ղուկ. Ա 30-33): Այս մասին Հին Կտակարանում մարգարեները նախապես գրել էին. «Ահա կույսը պիտի հղիանա եւ մի որդի պիտի ծնի...» (Ես. Է 14), ու այդ նորածինը պետք է դառնա աշխարհի Փրկիչը:

Եվ Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում: Մայրը փաթաթեց նրան խանձարուրով եւ դրեց մսուրի մեջ, որովհետեւ իջևանատանը իրենց համար տեղ չկար:

Մանուկ հասակում Հիսուսին տարան Եգիպտոս՝ Հրեաստանի Հերովդես արքայի հալածանքներից նրան հեռու պահելու համար, իսկ պատանի տարիքում, Հովսեփի եւ Մարիամի ուղեկցությամբ Նա վերադարձավ: Տեղեկություններ չկան այն մասին, թե ինչպես եւ ինչ միջավայրում է անցել նրա մանկությունն ու պատանեկությունը: Հայտնի է միայն, որ Եգիպտոսից վերադառնալով, Հիսուս ծնողների հետ հաստատվեց Գալիլեա գավառի Նազարեթ քաղաքում: Այս պատճառով էլ հետագայում նրան կոչեցին Նազովրեցի:

Հունվարի 6-ին՝ Ս. Ծննդյան Ս. Պատարագից հետո, կատարվում է **Ջրօրհնեք**, որը խորհրդանշում է Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը: Խաչով և Սրբալույս Սյուռոնով օրհնված հրաշագործ ջուրը բաժանվում է ժողովրդին՝ ի բժշկություն հոգևոր և մարմնավոր ախտերի:

Ս. Ծննդյան տոնակատարությունների շարքում կատարվում է նաև **Տնօրհնեքի** արարողություն: Ս. Ծննդյան և Ս. Հարության տոներից հետո մարդիկ հոգևորականին իրենց տուն և աշխատավայր են հրավիրում՝ տոնի կենարար ավետիսը և աստվածային օրհնությունը ստանալու նպատակով:

Հունվարի 7-ը, ինչպես և բոլոր տաղավար (մեծ, գլխավոր) տոներին հաջորդող օրերը, հանգուցյալների հիշատակության օր է՝ Մեռելոց: Այդ օրը՝ Ս. Պատարագից հետո, բոլոր եկեղեցիներում կատարվում է հոգեհանգստյան արարողություն, որից հետո մարդիկ այցելում են հարազատների շիրիմները:

Ս. Ծննդյան տոնի հանդիսություններն ավարտվում են **հունվարի 13-ին՝** Տիրոջ Անվանակոչությամբ, որը նվիրված է Մանուկ Հիսուսին՝ տաճարին ընծայելու, 8-րդ օրը թլպատվելու և անվանակոչվելու հիշատակին:

Տոնի ակունքները

Սուրբ Ծնունդը հայ ժողովրդի ամենասիրած տոներից մեկն է: Դեռևս հնագույն ժամանակներից սկսած՝ հայերը նշել են այն և բազմաթիվ ավանդույթներ կապել տոնի հետ:

Ս. Ծնունդին նախորդող գիշերը՝ հունվարի 5-ի երեկոյան գնացել են Եկեղեցի՝ Ճրագալույցի Պատարագին: Եկեղեցում խորանի վրա վառվող մեծ ջահից ամեն մեկը վառել է իր մոմը և ծածկած լապտերով զգուշորեն կրակը՝ Աստուծոյ Ծննդյան լույսը, տարել իր օջախ: Տոնական սեղանին դրված են եղել փլավը՝ բրինձով և չորացրած մրգերով, չիր ու չամիչով, ինչպես նաև՝ խաշած ձուկ: Խնջույքը շարունակվել է մինչև լույս: Քնել այդ գիշեր նշանակել էր բախտից զրկվել:

Հնում գյուղացիները իրենց երեխաներին հետ գնում էին մոտակա սրբավայրեր, մոմ վառում, աղոթում, իսկ տուն վերադառնալիս ծառերի վրա կապում իրենց թաշկինակները՝ հուսալով այնտեղ թողնել ամեն տեսակ հիվանդություն և նեղություն: Վերադարձի ճանապարհին ընդունված է եղել նաև սար բարձրանալ և մեծ, կլոր քարեր գլորել ետ, որպեսզի հիվանդությունները հեռանան:

Պատարագի ավարտից հետո տոնական տրամադրությունը, երգն ու պարը փոխանցվում էր Եկեղեցու պատերից դուրս՝ դեպի դաշտերը, տների տանիքները, բակերը, հրապարակները: Այստեղ տիրում էր ուրախ տրամադրությունն ու հայկական կլոր պարը՝ յայլի կամ գյովընդ:

Եկեղեցու բակում մեծ խարույկ են վառել և շուրջը նստել գյուղի տարիքով մեծերն ու պատմություններ պատմել, իսկ երիտասարդները շուրջպար բռնելով՝ Ավետիսներ ([Քրիստոսի Ծննդյան երգեր](#)) են երգել:

Մեծ տեղ է զբաղեցրել Ս. Ծնունդի ուտեստեղենի պատրաստությունը: Պահքի շրջանի համար պատրաստել են չորացրած մրգերից և ընկուզեղենից բազմաթիվ կերակուրներ: Հատկապես սիրելի են եղել շարոց կոչված թելերի վրա կախված վզնոցատիպ քաղցր կերակուրները՝ սուջուխը և ալանին:

Հունվարի 6-ին առավոտյան մարդիկ դուրս են եկել տնից նոր զգեստներով և ողջունել միմյանց՝ ասելով.

— Քրիստոս ծնավ և հայտնեցավ, մեզ և ձեզ մեծ ավետիս:

— Օրհնեալ է հայտնությունը Քրիստոսի:

Օգտագործված գրականություն

[Արամ Դիլանյան, «Ս. Աստվածածնի հղացման տոն»](#)

[Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»](#)

[Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին](#)

musicarmenie.com

Օժանդակ նյութեր՝

[Սուրբճննդան հոգևոր երգեր, Աստվածածնա պար](#)

[Բարեկենդան սուրբ Ծննդեան պահոց](#)

[Ճրագալույցի Ս. Պատարագ, Հաղորդություն](#)

[Հունվարի 6-13-ը՝ Տնօրհներ](#)

2.

Սուրբ Հարության տոն՝ Ջատիկ

Հայոց տոների շարքում Ջատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենասիրված ու ամենամեծ տոնն է, որը եկեղեցական օրացույցով (325թ Նիկիայի տիեզերաժողովի որոշմամբ) կատարվում է զարնանային գիշերահավասարից և լուսնի լրումից հետո եկող առաջին կիրակին:

Քրիստոսի Հարությունը քրիստոնեական վարդապետության և հավատի հիմքն է:

Ջատիկը թե Հին, և թե Նոր Կտակարաններում համարվում է հինգ տաղավար տոներից մեկը: Հիսուս Քրիստոսի խաչելությունից եւ մահից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ Նրա մարմինը իջեցրին խաչից եւ դրեցին վիմափոր գերեզմանի մեջ, փակելով մեծ քարով: Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը եւ Սողոմեն, գնացին գերեզման անուշաբույր յուղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքի քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք տարակուսում էին, երևացին երկու հրեշտակ և ասացին. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ հարություն առավ» (Ղուկ. 24:5-6):

Ս. Հարության տոնին նախընթաց երեկոյան եկեղեցիներում մատուցվում է Ճրագալույցի Ս. Պատարագ, որի ընթացքում պահք պահողները [Ս. Հաղորդություն](#) ստանալով, դուրս են գալիս պահքից և սկսում են զատկական տոնախմբությունները:

Տոնի նախօրեին և բուն Ջատիկի տոնի օրը մարդիկ միմյանց ողջունել են Քրիստոսի հարության առթիվ, մասնակցել պատարագին, ծիսական սեղանի շուրջը հավաքվել՝ պասից դուրս եկել, ձվակռիվներ, հանրային պարեր ու խաղեր կազմակերպել, խնջույքներում ուրախացել, նախշած ձվեր միմյանց նվիրել:

Գրիգոր Տաթևացին ձուն կարմիր ներկելու մասին ասում է՝ «Միայն Ջատիկին ենք ձուն կարմիր ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի, և, ինչպես իմաստուններն են ասում՝ դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է»:

Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի Արյամբ: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկությունը: Այն կարմիր ներկելու ծիսականությունն իր մեջ պարունակում է ուժի, սիրո և զոհաբերման գաղափարը: Դրանց պսակը հանդիսացավ Հիսուս Քրիստոսի զոհաբերությունը:

Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

Ջատիկը նաև տնօրհնեքի օր էր: Քահանաները տնից տուն էին շրջում, օրհնում իրենց մեկնված մատուցարանները, որոնց վրա դրված էին լինում թխմոր, աղ, խունկ, հացահատիկ, ջուր և այլ բարիքներ: Օրհնվում էր բարիքը՝ ապահովելով տարվա լիությունը:

Հաջորդ օրը՝ երկուշաբթի, Ջատկի մեռելոցն էր (տարվա երկու կարևորագույն մեռելոցներից մեկը): Բոլորը, նորատի հարսներից բացի, գերեզմանատուն էին գնում՝ իրենց հետ ունենալով զատկական կերակուրներ:

Սուրբ Հարության տոնին առաջներում մատաղ էին անում: Եվ վաճ մատաղը բաժանվում էր կիրակի օրը՝ զատկական պատարագից հետո: Այն տրվում էր հատկապես աղքատներին ու կարիքավորներին: Մատաղի միսը կարմիր ներկած ձվերի հետ տանում էին նաև գերեզմանատուն:

Տոնի ակունքները

Վարկածներ կան, որ սկզբնական շրջանում Հայաստան աշխարհում **Ջատիկը** եղել է անշարժ տոն և համընկել է մարտի 21-ի գիշերահավասար օրվա հետ՝ գիշեր-ցերեկն իրարից զատելու իմաստով:

Հետագայում, կապվելով լուսնային օրացույցի հետ, դառնում է շարժական և տոնվում Վահագնի ծնունդից հետո առաջին լիալուսնին հաջորդող օրը:

Արդեն իսկ փետրվարի վերջին օրը, լույս մարտի մեկի կեսգիշերին, ընտանիքներում ամեն մեկը մի-մի փայտ վերցրած՝ խփել է տան պատերին, հատակին՝ ձայնակցելով.

-Շվոտը դուրս, մարտը՝ ներս:

Այսպես վտարվել է փետրվարը՝ ծննդան վերջին ամիսը, և հալածվել է ծննդան ընթացքում տներում բույն դրած չարը (Շվոտ):

Հայերն այդ օրը սկսել են իրենց գարնանային վարուցանքը՝ ավելի զորանալով Վահագնով, իսկ մանուկները գունավոր ձվերը ձեռքներին՝ երգել-պարել ու ձվախաղ են արել:

Ի հիշատակ դրախտի Կենաց ծառի՝ Ջատկի առթիվ ընդունված էր տներում Կենաց ծառ (այսինքն՝ կյանքի ծառ) զարդարել: Որևէ կժի, կճուճի կամ ծաղկամանի մեջ չորացած ճյուղեր էին դնում: Դրանք հավաքում էին այգին էտելու (այսինքն՝ ծառերի չորացած ավելորդ ճյուղեր կտրելու) ժամանակ: Այդ ճյուղերի վրա կախում էին նաև զանազան ձևերով փնջած ասեղնագործ ձվիկներ:

Ըստ Ալիշանի, Ջատիկը նույնացվում է վրաց Ջադին, եգիպտացիների Սադի, հնդիկների Սատի անվան հետ և հիշատակվում է նաև Ջատիկ զաստվածն արդարության յԱրևելս: Սահին հայկական դիցաբանության մոռացված տոն է, որ հավանաբար տեղի է ունեցել գարնանամուտին: Նույնացվում է գոհի կամ զենումի գաղափարի հետ:

Իսկ Ստ. Մալխասյանցը Ջատիկ բառը ստուգաբանում է որպես տոն, ուրախություն: Մեկ այլ ավանդության համաձայն, մի ժամանակ Արարատում, բարձր լեռների կատարին բույն դրած Հազարան Հավքը, որ գիշերները ճառագում էր, իսկ ցերեկները Արևի ճառագայթների հետ ձուլում իր շողերը, դյուբիչ ձայնով երգում և բազմագույն ձվեր էր ածում՝ անընդհատ նորոգելով Արարատի գույների թարմությունը, իսկ Մայր Անահիտը դրանք շաղ էր տալիս ողջ Արարատով մեկ, որպեսզի հողն էլ դրանց նման բազմագույն պտուղներ տա: (Ս. Կակոսյան)

Ջատիկ բառը հատանել՝ Ջատել կամ բաժանել կամ էլ անջատել բայից բխեցնելն է:

«Ջատիկ» նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և իր վերջնական տեսքով՝ վերադարձ առ Աստված:

Հետաքրքրական է զատիկ բառը ընծա կամ ծու, կամ էլ գոհ, պատարագ բառերի շարքում իբրև հոմանիշ ընդունելը:

Ջատիկ բառը հայ մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվել է ավետարանի հայերեն թարգմանությունում՝ որպես հունարեն պասքա կամ պասեք բառի համարժեք: Եբրայերեն՝ բասխ կամ բեսախ, որը նշանակում է ելք, անցք:

Ջատկի տոնին մարդիկ երկար են նախապատրաստվել՝ մատաղի համար միջոցներ են հավաքել, յոթ բաղարջ են թխել, ծու են կուտակել, հրաժարվել պարերից, հարսանյաց

հանդեսներից, տունուտեղ են մաքրել, հանդերձները նորացրել: Մարդիկ հազար ու մի արարողությունների են դիմել՝ հիվանդություններից, ցավից, չոռից, կրծողներից, չար ոգիներից, երաշտից, կարկուտից, ջրհեղեղներից, հրդեհներից զերծ մնալու, տարին խերով անցկացնելու համար: Գուշակություններ են կատարել տարվա լավուվատի մասին, [ծիսական կերակուրներ](#) են եփել ու ճաշակել:

Օգտագործված գրականություն

Արտակ Արքեպիսկոպոս Մանուկյան «Հայ եկեղեցու տոները»

Հրանուշ Խառատյան «Հայ ժողովրդական տոներ»

Կայքէջ՝ araratian-tem.am

Օժանդակ նյութեր

[Զատիկի խոհանոց](#)

[Ծիսական տիկնիկ՝ Ալյատիզ](#)

[Զվանախշում](#)

[Զատկական ծիսական երգ, «Զարկ, բոլոճիկ, գարկ»](#)

[Զատկական խաղեր, «Զիբ-չիբ», «Աղամ»](#)

3.

Պայծառակերպության տոն. Վարդավառ

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը, որը հայտնի է նաև Վարդավառ անունով, Հայոց եկեղեցու հինգ տաղավար տոներից է: Պայծառակերպություն նշանակում է պայծառ կերպարանք, պայծառ տեսք ունենալ:

Հայոց ավանդական տոնակարգում Վարդավառն ամառային ամենամեծ տոնն է, որը, ըստ Հայ եկեղեցու տոնացույցի, տոնվել է Զատիկից 14 շաբաթ հետո: Հայաստանյայց եկեղեցին այն կոչում է նաև Այլակերպության տոն կամ Վարդավառ:

Պայծառակերպության տոնը նախապես տոնվել է Հայոց տոմարի Նավասարդ ամսի առաջին օրը՝ օգոստոսի 11-ին (ըստ Աբեղյանի՝ այն տոնվել է օգոստոսի 6-ին):

Հետագայում, երբ 551թ. Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի կողմից կատարվեց հայոց տոմարի նորոգությունը, փոփոխվեց և տոնի կատարման ժամանակը:

Ավելի ուշ, Գրիգոր Լուսավորչի մեկնությամբ, Վարդավառի տոնը քրիստոնեական եկեղեցին հայտարարել է Թաբոր լեռան վրա Քրիստոսի պայծառակերպության երևույթին նվիրված տոն, ինչի համար և այն հայտնի է նաև Պայծառակերպություն կամ Այլակերպություն անվամբ:

Քրիստոսի Պայծառակերպության մասին վկայում են Մատթևոս, Մարկոս, Ղուկաս ավետարանիչները. «Եւ նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը, եւ նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լույսը»: Եվ մինչ նա դեռ խոսում էր, ահա մի լուսավոր ամպ նրանց վրա հովանի եղավ. ամպից մի ձայն եկավ ու ասաց. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրան լսեցեք»:

«Մեր նախնիները այս տոնը վարդավառ անվանեցին, որովհետև վարդը քանի դեռ կոկոն է, ոչ իր գեղեցկությունը և ոչ էլ իր անուշահոտությունն է հայտնում, իսկ ժամանակի լրանալուն պես, քաղցրությունից շարժվելով, փթթում է և իր գույնով ու անուշահոտությամբ մարդկանց ուրախացնում: Ինչպես վարդն է ծածկված լինում որպես կոկոն, այդպես էլ Տերը նախքան իր պայծառակերպվելը պահում էր Իր մեջ Աստվածության պայծառությունը:

Եվ ինչպես վարդը բացվելով հայտնապես երևում է, այնպես էլ Տերն այսօր պայծառակերպվելով հայտնում է Իր Աստվածությունը», -գրում է Գրիգոր Տաթևացին:

Հավատում էին, որ Վարդավառի գիշերը սրբերի վրա լույս էր իջնում, և ով տեսներ այդ լույսը, կկատարվեր նրա նվիրական ցանկությունը:

Պայծառակերպության տոնին հաջորդող երկուշաբթի օրը մեռելոց է:

Տոնի ակունքները

Վարդավառը գալիս աս,

Ծաղիկը ցնծալիս աս...

Հայերը Վարդավառը լուսավոր և պայծառ տոն են անվանել, գերապայծառ լույսի ճառագայթում՝ նորահրաշ արփիափայլ լույսով պսակված:

Հայոց ավանդական տոնակարգում Վարդավառն ամառային ամենամեծ տոն է: Տոնակատարություններից հատկապես ճոխ են եղել և բոլորին մեծ զվարճություն պատճառել Համբարձումն ու Վարդավառը՝ ջրի, ծառ ու ծաղկի պաշտամունքի տոները:

«Վարդավառ» բառը խեթական ծագում ունի և նույնիսկ խեթերենին շատ մոտ սանսկրիտում այդ բառը գոյություն ունի և նշանակում է ջուր (վարդ) ցողել (վառ): Որոշ հեղինակների կարծիքով էլ՝ այն նշանակում է «կրակավառ», «հրավառ»: Եվ իրոք, հուլիսին, այսինքն՝ հրոտից ամսին, երբ արևը հասնում է իր կիզակետին, հրավառվում, չորանում է բնությունը, մարդիկ զանգվածաբար ջրցանություն են կատարում և աստվածներից ջուր խնդրում: Վարդավառը տարվա մեջ նաև

ազգակիցներին համախմբելու, նրանց կապը մշտապես պահպանելու դեր է ունեցել: Շատ շրջաններում այդ օրը պարտադիր հավաքվել են հեռավոր քաղաքներում ապրող զավակներն ու հարազատները: Նրանք հանդիպել են հայրական հարկի տակ, նվերներ փոխանակել, առել միմյանց կարոտը, արտահայտել փոխադարձ սեր ու նվիրվածություն: Ի դեպ, մեր ժամանակներում էլ սփյուռքահայերը Հայաստանում իրենց հարազատներին այցելելու համար սովորաբար ընտրում են հենց այս տոնը: Վարդավառը հայոց հնագույն տոներից է, այդ պատճառով էլ պահպանվել են տոնի հեթանոսական սովորույթները՝ միմյանց վրա ջուր ցողելը, աղավնի թռցնելը և այլն: Հնում դույլերով ու թասերով ջուրը գիշերը դնում էին լուսնի լույսի տակ ու հաջորդ օրը՝ կեսօրին, պարտադիր ցողում իրար վրա՝ որպես ջրով օրհնվելու ու մաքրվելու կարգ:

Վարդավառի ջրային խաղերը հնում սկսվում էին աղավնի թռցնելով: Վարդավառի տոնին մեծ ու փոքր, տղամարդ ու կին կժերով, սափորներով և դույլերով իրար վրա ջուր էին լցնում: Այդ օրը սկեսուրի վրա նույնիսկ չխոսկան հարսն էր համարձակվում ջուր ցողել, ու ոչ ոք վիրավորվելու իրավունք չուներ: Եվ ոչ ոք չէր դժգոհում կամ վիրավորվում, որովհետև այդ օրը ջուրը համարվում էր ամենազորեղ, ամենաբուժիչ: Այս ամենն ուղեկցվում էր ավանդական երգ ու պարով, խաղերով: Մարդիկ իրար վարդեր էին նվիրում, իսկ սիրահար երիտասարդները աղավնիներ էին թռցնում, ու թե աղավնին երեք անգամ պտտվում էր սիրած աղջկա տան կտուրին, նույն աշնանը հարսնության էին տանում նրան:

Շատ հետազոտողներ գտնում են, որ Վարդավառը հայոց մեջ արմատավորվել է ի հիշատակ Արարատ լեռան վրա Նոյան տապանի հայտնվելուն: Ըստ որոշ մասնագետների, տոնը կապված է Ջրհեղեղի և Նոյի՝ տապանից իջնելու հետ: Նոյի ուղարկած աղավնին վերադարձավ՝ բերելով կտուցին պահած ձիթենու մի ձյուղ: Տեսնելով այդ ձյուղը՝ Նոյը հասկացավ, որ ջրերն աստիճանաբար ցամաքում են: Նա պատվիրեց իր որդիներին տարին մեկ անգամ իրար վրա ջուր լցնել, որպեսզի չմոռանան ջրհեղեղը: Ի դեպ, ժողովրդական մի ավանդությամբ, Աստղիկը համարվում է Նոյ նահապետի՝ Ջրհեղեղից հետո ծնված դուստրը: Ըստ հնագույն լեգենդի, հեթանոսական շրջանում այն նվիրված էր սիրո ու ջրի հեթանոս աստվածուհի Աստղիկին, որը վարդաջրեր ցողելով ու վարդեր նվիրելով, սեր էր պարգևում մարդկանց: Վարդեր նվիրելու սովորությունից էլ, ըստ երևույթին, առաջացել է Աստղիկի «Վարդամատն» (վարդե մատներ ունեցող) մականունը:

Քանի որ Աստղիկը ծնվել էր ջրի փրփուրներից, մարդիկ այդ օրը միմյանց վրա ջուր էին ցողում և զոհաբերություններ անում դիցուհուն՝ անձրև խնդրելով ամառային շոգերից

թոշնած իրենց դաշտերի համար, և սեր՝ իրենց ընտանիքների համար: Հայոց սիրո և գեղեցկության աստվածուհին՝ Աստղիկը, Վահագն աստծու սիրեցյալն էր: Ըստ ավանդույթի, ստորգետնյա աստվածը արարչական ընտանիքից գողանում է Աստղիկին: Բայց Վահագնը հաղթելով Վիշապին՝ ազատում է Աստղիկին և շրջելով Արարատով, մարդկանց օծում է վարդաջրով, վարդավառ է սարքում:

Ըստ մեկ այլ ավանդագրույցի, երբ Աստղիկը քայլում էր՝ ոտքերից կաթկթացող արյունից վարդեր էին բուսնում, իսկ, երբ դիցուհին վարդի թերթիկներ էր թափում Հայոց աշխարհի վրա, դրանք աննկատելիորեն հավում էին հայուհիներին և նրանց օժտում աստվածային գեղեցկությամբ:

Հայաստանում այս տոնը նշվել է շատ ավելի ճոխ, քան հիմա: Շաբաթներ առաջ երիտասարդները պատրաստվում էին տոնին. նոր հագուստ էին կարում, ծաղիկներով զարդարում էին տունը, իսկ այդ օրը միմյանց նվերներ էին տալիս:

Վարդավառը տոնում էին ուխտագնացություններով դեպի նշանավոր լեռների սրբավայրերը և ջրերի ակունքները:

Հատկապես նշանավոր էր [Մշո սուրբ Կարապետ վանք](#) կատարվող ուխտագնացությունը:

Ուխտավորներն օրերով մնում էին սրբավայրերում, կազմակերպում միջոցառումներ (մարմնամարզական խաղեր, ծիարշավներ, ընթանարտեր, կազմակերպվում էին տոնավաճառներ, զբոսախնջույքներ, լարախաղացների ուրախ հանդեսներ):

Ուխտավայրերը դառնում էին նաև աղջիկտեսի և ծանոթության գլխավոր վայրեր:

Վարդավառին «Նուրին» տիկնիկներ էին պտտում, դրանց վրա ջուր, ձու լցնում և, այլուր, յուղ հավաքելով՝ կատարում յուրատեսակ զոհաբերություն:

Տոնի ժամանակ մարդիկ հացահատիկի հասկեր էին հավաքում դաշտերից և տանում եկեղեցի՝ օրհնելու, որպեսզի դաշտերը պահպանեն կարկուտից ու

մորեխներից, խնդրելով. «Աստված, պարզերես պահե մեզ Վարդավառի տապ ու շոգեն...»

:

Տարեցները հանգանակություն էին անում մատաղացուի համար: Այս մատաղի հիմնական նպատակը ևս դաշտերը երաշտից, մորեխներից ու զանազան աղետներից պաշտպանելն էր:

Երիտասարդները վառում էին խարույկներ և լուսաբացը դիմավորում կրակի շուրջը՝ խմբապարով: Պարերն ուղեկցվում էին երգերով, խաղերով, կատակներով:

Օգտագործված գրականություն

Արամ Դիլանյան «Տերունի տոներ»

Արտակ Արքեպիսկոպոս Մանուկյան «Հայ եկեղեցու տոները»
«Հայ եկեղեցու պատմություն» դասագիրք

Օժանդակ նյութեր

[«Վարդավառ» մեղիափաթեթին](#)

[Պայծառակերպության Տեառն մերոյ Քրիստոսի \(Վարդավառ\)](#)

[Վարդավառը հայ մատենագրության մեջ](#)

[Պայծառակերպության տոնի պատկերագրություն](#)

[Վարդավառի ծիսական պարագաներ. խաչքուռ](#)

[Վարդավառի ծիսական պարագաներ. խնդում](#)

[Վարդավառի ծիսական երգեր, խաղիկներ, բանաստեղծություններ](#)

[Վարդավառի ծիսական ուտեստներ](#)

[Վարդավառի խաղերից՝ Կլոր պար](#)

[Վարդավառ տոնի ակունքները](#)

4.

Վերափոխումն Սուրբ Աստվածածնի

Օգոստոսին նշվում է Ս. Մարիամ Աստվածածնի Վերափոխումը (վերափոխում նշանակում է վերփոխվել, վեր փոխադրվել), որը կենցաղում առավել հայտնի է Խաղողօրհներք անվամբ:

Աստվածածնի Վերափոխումը Տիրամորը նվիրված հայոց եկեղեցական տաղավար տոներից է: Այդ օրը պատարագից հետո կատարվում է խաղողօրհներք՝ «որպէս արմտեաց և պտղոց օրհնութիւն»: Օրհնվում է նաև տարվա ողջ բերքն ու բարիքը:

Ս. Կույսի երկրային կյանքի վախճանը Եկեղեցին ննջում և ոչ թե մահ բառով է որակում՝ հասկանալի դարձնելու նրա երկինք փոխադրված լինելը: Հայերս տոնում ենք ոչ թե Աստվածամոր ննջումը, այլ իր Միածին որդու մոտ վերափոխումը:

Աստվածամոր Վերափոխման տոնը միշտ կատարվում է կիրակի օրը, քանի որ ս.

Մարիամը ծնվեց հինգշաբթի օրը (մեր եկեղեցին Աստվածամոր ծննդյան տոնը հաստատուն կերպով տոնում է սեպտեմբերի 8-ին), ննջեց նույնպես հինգշաբթի օրը, իսկ կիրակի օրը հարություն առավ՝ փոխվեց իր որդու մոտ: Վկայությունը հավաստում է, որ Աստվածամոր «...ննջելու օրը լեռները, դաշտերն ու հովիտները

զարդարվեցին՝ ծլարծակելով բազմերանգ ծաղիկներ, երգասաց թռչունների երամները երգեցին իրենց քաղցրահունչ օրհնությունները»:

Կրոնական ավանդության համաձայն՝ Աստվածամայրը խաղաղ մահ է ունեցել, ննջել և երկինք փոխադրվել կամ վերափոխվել: Ավանդության համաձայն՝ ս. Կույսը Հիսուս Քրիստոսի խաչելությունից հետո ապրել է Երուսաղեմում, Հովհաննես Ավետարանչի խնամատարության ներքո: Շուրջ 12 տարի Աստվածամայրը պահքով հաճախ այցելել է իր սիրասուն Որդու գերեզմանն ու անդադար աղոթել: Այդ այցելություններից մեկի ժամանակ էլ նրան է հայտնվել Գաբրիել հրեշտակապետն ու ավետել Տիրամոր՝ երկրային աշխարհից Վերին Երուսաղեմ վերափոխվելու լուրը: Աստվածածինն էլ այս բարի լուրը հայտնել է իր ազգականներին ու մյուս բոլոր քրիստոնյաներին՝ պատվիրելով, որ իրեն թաղեն Գեթսեմանիի ձորակում: Ս.Կույսը նաև պատվիրել է Հովհաննես առաքյալին, որ վերջինս պատարագ մատուցի, որպեսզի ինքը վերջին անգամ հաղորդություն ընդունի: Հաղորդվելուց հետո Աստվածամայրը գնացել է Վերնատուն: Մինչ առաքյալները լաց էին լինում, Հովհաննեսը վերցրել է մի տախտակ ու տվել Աստվածածնին և խնդրել, որպեսզի նա իր պատկերը դրոշմի դրա վրա: Տիրամայրը վերցրել է տախտակը, խաչակնքել և երեսին դրել, այնուհետև թրջել արցունքներով և Աստուծոց խնդրել, որ այդ տախտակի միջոցով մարդիկ բժշկվեն իրենց ախտերից և զանազան հիվանդություններից: Երբ առաքյալները շրջապատել են Տիրամոր մահիձը, աննկարագրելի մի լույս է երևացել: Սենյակի վերևում հրեշտակների հետ հայտնվել է Քրիստոսը: Տեսնելով իր Որդուն՝ Աստվածամայրն ավանդել է հոգին: Բարթոլոմեոս առաքյալը, որ բացակայում էր հուղարկավորությանը, վերադառնալով Երուսաղեմ, ցանկանում է վերջին անգամ տեսնել Աստվածամորը: Առաքյալները նրա խնդրանքով բացում են գերեզմանը, սակայն այնտեղ Տիրամոր մարմինը չի լինում: Այդ նշանակում էր, որ Հիսուս իր խոստման համաձայն երկինք էր փոխադրել իր Մորը: Առաքյալներն էլ փայտի վրա դրոշմած պատկերը տալիս են Բարթոլոմեոսին՝ որպես մխիթարություն:

Ըստ Մովսես Խորենացու, Հայաստանի առաջին լուսավորիչն այն բերում է Հայաստան և գետեղում Անձևացյաց գավառի Դարբնոց կոչված վայրում, ուր հետագայում, ի պատիվ Աստվածամոր, եկեղեցի և կուսանոց է հիմնադրվում:

Հայոց կենցաղում այդ տոնի համատեքստում առանձնանում էին մատաղները, ուխտագնացությունները և խաղողօրհնեքի արարողությունը, որը բնապաշտական ծագում ունեցող ծես է և առնչվում է Նավասարդի՝ բերք ու բարիքի առատությունն ապահովող հավատալիքների հետ: Նավասարդի տոնակատարությունները կատարվում էին հայոց աստվածամայր Անահիտին նվիրված մեհյաններում, որոնց տեղերում քրիստոնյա Հայաստանում կառուցվեցին Մարիամ Աստվածածնի անունով եկեղեցիներ ու

վանքեր: Քրիստոնեական այս օջախները ժառանգեցին Անահիտին նվիրված մեհյանների տոնահանդեսները, իսկ Մարիամ Աստվածածինը՝ Անահիտի գործառույթները:

Հավանաբար ոչ մի սրբի այնքան աղոթք չէին հղում, որքան ս. Մարիամին:

Աստվածածինն ապավինում էին հատկապես կանայք, աղաչում էին իրենց զավակ պարգևել, նպաստել իրենց սիրային իղծերին, բուժել հիվանդներին, պաշտպանել իրենց ընտանիքի անդամներին և այլն: Հայ եկեղեցին դարեր շարունակ խորին հարգանք և երկյուղածություն է տածում Աստվածամոր հանդեպ՝ շեշտելով Աստծո մայր լինելու հանգամանքը, մաքրակենցաղությունը, անօրինակ խոնարհության ոգին, առաքինի վարքն ու նվիրվածությունը: Իսկ հայ կնոջ համար ս. Մարիամը առաքինի, հավատավոր մոր, ընտանեկան սրբության պահապանի մարմնացումն է: Բնական է, որ Մարիամ Աստվածածնի տոնահանդեսները կատարվում էին գլխավորապես նրա անունը կրող ուխտավայրերում: Շատ վայրերում նախապես ընտրելով իրենց տոնական ուխտավայրը, ազգականների խմբերը երբեմն գիշերով ձանապարհ էին ընկնում, որպեսզի արևածագը դիմավորեին նախապես որոշված ուխտավայրում: Գիշերային այդ երթերը տոնական հանդիսության հետաքրքիր մասն էին կազմում, որոնց ընթացքում անպակաս էին զանազան խաղերն ու երգերը: Առավոտյան սկսվում էր մատաղի արարողությունը:

Կերակրատեսակների մեջ աչքի էր ընկնում մրգերի առատությունը, կաթնասերը, գաթան, հավվան, մատաղիմիսը: Այդ օրը բոլոր թոնհիրները վառվում էին և կանայք ձեթով **բոկեղ** (կլոր կամ մանյակածև անուշահամ հաց, նաև՝ սիմիտ, կիլիկիաց) էին թխում: Խաղողօրհնեքի բոկեղը պատրաստել են ձեթով և խաղողի պտղահյութով: Բոկեղի հոտը դառնում էր տոնի ուղեկիցը: Կիրակի անպայման **սմբուկով ու սիսեռով ճաշ** էին եփում: Այս սմբուկը հավանաբար տարվա առաջին բերքն էր լինում: Այս ճաշատեսակն այնքան տարածված էր, որ հարևան թուրքերը Աստվածածնի տոնը **«պատընձան պայրամ»** (սմբուկի տոն) էին կոչում:

Ուխտավայրերում երգվող երգերը գլխավորապես սիրային երգերն էին, սակայն զգալի թիվ էին կազմում նաև ս. Մարիամին գովերգողները:

Ավանդաբար Աստվածածնի վերափոխման տոնին հաջորդում է **խաղողօրհնեքի արարողությունը**: Մինչ ս. Աստվածածնին նվիրված այս տոնը, խաղողը պաս էր համարվում այնպես, ինչպես **խնձորը՝ Վարդավառին**:

Աշխարհի բազում ժողովուրդների մեջ ավանդաբար պահպանված սովորույթ կա՝ հասունացած առաջին բերքը, առաջին պտուղները զոհաբերել ուխտավայրում կամ պաշտամունքի այլ օջախներում, որից հետո միայն կարելի է այն ճաշակել: Հայոց մեջ քրիստոնեական այս մշակույթը ներդրել է **Գրիգոր Լուսավորիչը**, իսկ որպես կանոնական ծիսակարգ մշակել է **Ներսես Շնորհալի հայրապետը**:

Խաղողն օրհնելու ծեսով պայմանավորված՝ այս տոնը ժողովրդի կողմից ստացել է Խաղողօրհնեք անվանումը: Քրիստոնեության ընթացքում ընդհանրացված սովորույթ էր դարձել խաղողի առաջին ողկույզները քահանային օրհնել տալը: Երբեմն խաղողի առաջին բերքը տանում էին եկեղեցի, սակայն առավել հաճախ քահանան էր գնում խաղողի այգի և տեղում օրհնում հասունացած և դեռ հասունացող բերքը՝ բարենաղթելով բերքի առատություն: Քահանան, մկրատը աջ ձեռքում և խաչը ձախ ձեռքում, մտնում էր այգիները, կատարում էր անդաստան և խաղողի օրհնության արարողությունը, իսկ ճաշակողների համար հայցում մտքի և հոգու առողջություն: Օրհնությունից հետո սովորություն կար թռչուններին ևս բաժին հանել: Այդ նպատակով, օրհնված խաղողի ողկույզները կախում էին բարձր վայրերից կամ էլ խաչքարերի վրա: Քրիստոնեական այս ծեսն անցյալում կատարվում էր մեծ հանդիսությամբ, քանզի խաղողը հայոց մեջ համարվում էր մրգերից ազնվագույնը: Պատահական չէ, որ պատարագի գինին հենց խաղողից էին պատրաստում: Նույն օրհնված խաղողից օրհնված գինի էին պատրաստում, որը մարդիկ պահում էին մինչև հաջորդ տարվա խաղողօրհնեքը՝ որպես լիառատության ապահովման նշան:

Իսկ ինչո՞ւ է նման օրհնության համար ընտրվել հատկապես խաղողը: Քրիստոսն իրեն համեմատում էր խաղողի վազի որթատունկի հետ. «**Ես եմ ճշմարիտ որթատունկը...**»: Խաղողից է պատրաստվում նաև գինին: Քրիստոսը, Խորհրդավոր ընթրիքի ժամանակ գինին տալով աշակերտներին՝ ասաց. «**Այս է իմ արյունը**»: Իսկ Տիրոջը սիրով կապվածներին **ճյուղեր** անվանեց և Հորը՝ **Մշակ**, որպեսզի Հայրը, էտելով որթատունկը՝ այն պտղաբեր դարձնի արդարության գործում, իսկ էտված ճյուղերը հավիտենական կրակի նյութ դարձնի:

Տոնի ակունքները

Խաղողի օրհնության ավանդույթը հայերի մեջ ծնունդ է առել դեռևս Նոյի ժամանակներից: Երբ Նոյը տրտմում է աշխարհի ապականության համար՝ Աստված նրան գինի է տալիս մխիթարելու համար: Իսկ, երբ Նոյն իջնում է Արարատի գագաթից, նրա առջև բացվում է մի հիասքաչ դաշտ: Այստեղ էլ նա տնկում է խաղողի առաջին որթը: Աստվածաշունչն այսպես է ներկայացնում խաղողագործության սկիզբը հայոց աշխարհում:

Ավանդույթը կապված է նաև մայրության և պտղաբերության հեթանոսական աստվածուհի Անահիտի հետ: Անահիտի գլխավոր տոնը կապվում էր բերքի հասունացման հետ և նշվում էր հին տոմարով Նավասարդի սկզբին, որը համընկնում է ժամանակակից Խաղողօրհնեքի օրվա հետ: Խաղողը և գինին կապվում էին սիրո, գեղեցկության

աստվածուհու՝ Աստղիկի, և հյուրընկալության, այգեգործության ու բերքի հովանավոր աստծո՝ Վանատուրի հետ: Սակայն հայ հեթանոսական դիցարանում կար ևս մեկ աստվածություն, ում մեհյանին խաղող էր մատուցվում: Դա անդրաշխարհի աստվածն էր՝ Սպանդարամետը, որին նույնացնում էին հունական Դիոնիսիոսի՝ գինու և խրախճանքների աստծո հետ: Ինչպես վկայում է պատմիչ

Ագաթանգեղոսը, Սպանդարամետի գլխավոր մեհյանը ավերվում է Գրիգոր Լուսավորչի և Տրդատ արքայի հրամանով, և հենց այս նույն տեղում 303 թ. կառուցվում է Կաթողիկե եկեղեցին:

Հեթանոսական աստվածներին փոխարինելու եկան քրիստոնեական սրբերը: Անահիտի պաշտամունքին փոխարինեց Մարիամ Աստվածածինը՝ որպես մայրության և պտղաբերության մարմնացում: Վերաիմաստավորվեցին նաև Անահիտին նվիրված ծիսակատարությունները, սակայն նույնը մնաց խաղողը:

Օգտագործված գրականություն

Արտակ Արք. Մանուկյան «Հայ եկեղեցու տոները»

Արամ Դիլանյան «Տերունի տոներ»

Մովսես Խորենացի «Հայոց պատմություն»

Ագաթանգեղոս «Հայոց պատմություն»

Օժանդակ նյութեր

[Ներսես Շնորհալի «Խաղողի օրհնության աղոթք»](#)

[Գրիգոր Տաթևացի «Քարոզ Աստվածածին կույսի վերափոխման մասին»](#)

[Գրիգոր Նարեկացի «Ներքող Աստվածածնին»](#)

[Մխիթար Սեբաստացի «Անճառին խորան»](#)

[Մովսես Խորենացի «Անթառամ ծաղիկ»](#)

[Տիրամոր վերափոխման ավետարանական թեման հայ մանրանկարչության մեջ](#)

5.

Խաչվերաց

Խաչվերացը Հայ եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է: Այն Խաչին նվիրված տոներից ամենակարևորն է, որովհետև նվիրված է գերությունից խաչի վերադարձի և փառաբանության հիշատակին:

Սուրբ Խաչը տոնվում է ի հիշատակ Տիրոջ խաչափայտի՝ պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի և Գողգոթայում կանգնեցման (վերացման): Այստեղից էլ տոնը կոչվում է Խաչվերաց: Խաչվերաց նշանակում է խաչը վեր բարձրացնել:

610 թվականին պարսից Խոսրով թագավորը գրավում է Երուսաղեմը: Նա ավերում և թալանում է քաղաքը՝ իր հետ տանելով նաև [Սբ. Հարություն տաճարում](#) պահվող Հիսուս Քրիստոսի խաչափայտը: Բյուզանդիայի Հերակլ կայսրը մեծ զորք է հավաքում և խաչափայտն ազատում գերությունից: Որպես պատմական վկայություն նշենք, որ հայ ժողովուրդը ևս մասնակցել է խաչի ազատագրման գործին: Կայսրին ռազմական օժանդակություն է ցույց տվել հունական մասի հայոց զորքը՝ Մժեժ Գնունու զլխավորությամբ: Նրան մեծապես օգնել են նաև հայոց իշխանները և հատկապես Սյունյաց Բյուրեղ իշխանուհին: Եվ, երբ Հերակլը հաղթում է և խաչափայտով հետ է դառնում, ի նշան երախտագիտության՝ իշխանուհուն է տալիս Քրիստոսի խաչափայտից մի մասունք: Հանդիսավոր արարողություններով, ի տես ճանապարհին հավաքված ժողովրդի, խաչափայտը վեր բարձրացնելով՝ Հերակլը այն վերադարձնում է Երուսաղեմի Սբ. Հարություն տաճարը: Խաչը հանդիսավոր թափոքով տարվում է Երուսաղեմ՝ Փոքր Ասիայի վրայով, ու բնական էր, որ այն անցնելու էր պատմական Հայաստանով: Այդ առիթով էլ Կարնո դաշտի հարավարևելյան կողմում բարձրացող լեռների մեծ գագաթը Խաչափայտ է կոչվում: Թափորն անցնում է Երզրում քաղաքով:

Ըստ ավանդության, Կարնո լեռների ստորոտներից մեկի մոտ պարսիկները փորձում են ետ վերցնել խաչը: Հայերը, խաչափայտը թողնելով, ետ են մղում պարսկական կողմի հարձակումները, և, երբ վերադառնում են խաչափայտը վերցնելու, տեսնում են, որ Խաչի դրված տեղից վճիտ ու սառնորակ աղբյուր է բխում: Նույն տեղում կառուցվում է Խաչկա կամ Խաչավանքի եկեղեցին, որը հետագայում ուխտատեղի է դառնում: Հատկապես Խաչվերացի տոնի առթիվ այնտեղ բազում ուխտավորներ էին այցելում:

Խաչը, ինչպես հայտնի է, հնում եղել է չարչարանքի գործիք: Երբ Հիսուս խաչվեց՝ այդ նույն խաչափայտը դադարեց չարչարանքի գործիք լինելուց: Խաչը դարձավ փրկության միջոց, Քրիստոսի սիրո արտահայտությունը, քանզի սիրել նշանակում է նաև զոհաբերություն, զրկանք հանձն առնել: Սերը միայն զգացում չէ, սերը կյանք է և գործ: Եվ Քրիստոսի խաչելությունը հենց այդ սիրո արտահայտությունն է: Խաչն այսօր մեզ համար դարձել է փրկության միջոց, հարության խորհուրդ, պահպանիչ զորություն, քավության զոհասեղան, բժկության աղբյուր:

Խաչն ունի խորհրդանշական երկու մաս. մեկը ուղղահայաց, մյուսը՝ հորիզոնական, որը ցույց է տալիս դեպի երկինք գնացող և դեպի աշխարհը ծավալվող ճանապարհները: Ըստ սուրբ հայրերի, խաչի խորհուրդը Աստծո և աշխարհի հետ հաշտ ապրելն է:

Խաչվերացի տոնը մեզ համար նախևառաջ հարությամբ նորոգվելու խորհուրդն ունի: Ըստ Գրիգոր Տաթևացու, Խաչը դարձավ երկնքի և երկրի միջև եղած վիհը միացնող կամուրջը, «դրախտի դռները բացողն ու երկնային արքայությունը որպես ժառանգություն տվողը»: Խաչի բարձրացումով մեկ անգամ ևս հաստատվեց Քրիստոսի հաղթանակն ընդդեմ մահվան:

Ժողովուրդը Խաչվերացին կատարում է անթիվ ուխտագնացություններ: Որոշ բնակավայրերում մարդիկ իրենց ձեռքերով խաչեր են պատրաստում և զարդարում գույնզգույն ծաղիկներով, հատկապես ռեհանով: Ժողովուրդը ռեհանն է համարում խաչի ծաղիկ:

Հայ հավատացյալը խաչի նկատմամբ իր առանձնահատուկ վերաբերմունքը արտահայտել է խաչքարեր կերտելով և իր կառուցած բազմաթիվ եկեղեցիների զգալի մասը անվանակոչելով Սուրբ Խաչ անունով: Ամենանշանավորը, թերևս, պատմական Հայաստանի Վանա լճի Աղթամար կղզու [Սուրբ Խաչ եկեղեցին](#) է: Ինչպես եկեղեցական ուրիշ կարևոր տոնակատարությունների ժամանակ, այնպես էլ Խաչվերացին ևս տեղի են ունեցել բազմաթիվ ուխտագնացություններ, մանավանդ դեպի Սուրբ Խաչ անունը կրող եկեղեցիներ ու վանքեր: Խաչվերացի տոնը կատարվել է բնակավայրերից հեռու գտնվող եկեղեցիներում:

Ըստ Հովհան Ոսկեբերանի, բնակավայրերը քաղաքակրթության օրրաններ են, և մարդը գտնվելով նրա մեջ, դառնում է նույն քաղաքակրթության գերին, և որպեսզի մարդը կարողանա մոտենալ աստվածային ճշմարտությանը, կտրվի երկրայինից ու մոտենա երկնայինին, պետք է հեռանա քաղաքակրթությունից՝ մարդաշատ վայրերից, քաղաքներից:

Ընդհանուր առմամբ՝ Խաչվերացը կամ Սըրբխեչը աշնան սկիզբը խորհրդանշող ուրախ տոն է: Տոնի նախօրեին՝ շաբաթ օրը, կանայք խմորեղեն են պատրաստում, տղամարդիկ՝ ուլ մորթում ու գորովի պատրաստում: Հավանաբար այդ է պատճառը, որ տոնը կոչել են նաև Ուլնոց: Խորոված ուլը կոչվում է «խրովու», իսկ ուլի ճարպով ներծծված ձավարի փլավը՝ «քաշկակ»: Ժողովրդական ավանդության համաձայն, ուլի միսը և ձավարով փլավն այդ օրվա առանձնահատուկ ուտելիքն է, առանց որի տոնը լիարժեք չի կարող լինել:

Տոնին նվիրված կերակրատեսակներից են՝ ուլի խորովուն, մշոշը, դափաման, գաթան, ոսպով շորվան:

Սուրբ Խաչին նվիրված պարերից, մասնագետների կարծիքով,

ամենահայտնին **քոչարին** է, որի հիմնական իմաստը խոյի պաշտամունքն է: Եվ, քանի որ

ուլը, այծը՝ որպես խաղողը փչացնող կենդանի, մատաղ են արել, մորթելուց առաջ արծակած ձայնը կոչվել է նոխագերգություն կամ քաղենվագ:

Խաչվերացի հաջորդ օրը **մեռելոց** է: Այդ օրը եկեղեցիներում մատուցվում է պատարագ, կատարվում է հոգեհանգստյան կարգ, որից հետո այցելում են հանգուցյալների շիրիմներին՝ հետները ունենալով մրգեղեն, հատկապես խաղող, ձմերուկ, խմորեղեն, կաթնասեր, կանաչեղեն, պանիր: Այդ օրը գերեզմանատուն տարվող մրգերը «նան ու տրի» էին կոչում:

Շատ տեղեր Սըբխեչի տոնն ընկալվում էր որպես աշնանամուտ: Ինչպես ասում էին՝ «Խաչ, վերմակ առ, ներս փախիր», այսինքն՝ բացօթյա գիշերողներն այլևս տուն էին քաշվում: Ժողովուրդը սկսում էր «դրսից ներս գալ» և ամփոփել տարվա բերք ու բարիքի արդյունքները և գոհունակ սրտով փառաբանել Տիրոջն ու նրա կենարար Խաչը՝ «Մեռնիմ Խաչի զօրութեան...»:

Տոնի հետ են կապվում հետևյալ անունները՝ Խաչիկ, Խաչատուր, Խաչերես, Խաչեր, Խաչո, ինչպես նաև՝ Ռեհան: Մեր օրերում սկսում է տարածում գտնել նաև Քրիստինե անվան հայերեն տարբերակը՝ Խաչանույշ:

Օգտագործված գրականություն

Արամ Դիլանյան «Տերունի տոներ»

Հր. Խառատյան «Հայ ժողովրդի տոներ»

Հովհան Ոսկերբերան «Ճառեր»

«Հայ եկեղեցու պատմություն» դասագիրք

Կայքէջ՝ araratian-tem.am

Օժանդակ նյութեր

[Երուսաղեմի Ս. Հարության Տաճար](#)

[Վարագա Ս. Խաչի տոն](#)

[Նավակատիք Սուրբ Խաչի](#)

[Խաչի երևման տոն](#)

[Տոն Խաչի գյուտի](#)

[Մեր կյանքում խաչն ամենուր է](#)